# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 2286-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 398-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 398-Լ որոշման՝

1) N 1 հավելվածում՝

ա. 1-ին գլխի 18-րդ կետի 2-րդ ենթակետից հանել վերջին նախադասությունը, իսկ 3-րդ գլխից՝ 43-րդ և 49-րդ կետերը,

բ. 3-րդ գլխի 3.3.4-րդ ենթագլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 78.1-ին կետով՝

«78.1. Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության տեղեկատվական ազգային համակարգ: Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության խթանումը ենթադրում է տեղեկատվական համակարգի առկայություն և տվյալների հավաքագրման գործընթացի հիմնում: Այս առնչությամբ նշված թիրախին հասնելու համար Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի երկրորդ փուլում (2025-2027 թթ.) նախատեսվում է պետության կամ համայնքային սեփականությունը հանդիսացող կամ վերջինների կողմից իրականացվող վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության բնագավառի ծրագրերի մասով պետական կամ համայնքային ենթակառուցվածքների էներգասպառման և օգտագործված էներգակիրների, ինչպես նաև ենթակառուցվածքների վերաբերյալ ֆիզիկատեխնիկական տվյալների հավաքագրում և վերլուծություն: Նախատեսվում է նաև հավաքագրել և վերլուծել պետության կամ համայնքների կողմից սեփական կարիքների համար արտադրվող էներգիայի քանակների և տեղակայանքների վերաբերյալ տեղեկատվություն:».

2) N 2 հավելվածում՝

ա. 1.3-րդ կետի «Վերջնաժամկետը» սյունակում «2023 թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել « 2024 թ. դեկտեմբեր» բառերով,

բ. 2.1-ին կետի «Համակատարող մարմինը (մարմինները)» սյունակից հանել «ՀՀ ՎԿ» բառերը,

գ. 2.5-րդ կետի «Վերջնաժամկետը» սյունակում «2023 թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել «2024 թ. դեկտեմբեր» բառերով,

դ. 2.6-րդ կետի «Վերջնաժամկետը» սյունակում «2023 թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել «2024 թ. հուլիս» բառերով,

ե. 3.1-ին կետի «Վերջնաժամկետը» սյունակում «2023 թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել «2024 թ. դեկտեմբեր» բառերով,

զ. ուժը կորցրած ճանաչել 1.4-րդ, 2.2-րդ և 2.3-րդ կետերը,

է. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.8-րդ կետով՝

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.8. | Հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի մշակում | Հանրային իրազեկման մակարդակի բարելավման թիրախային միջոցառումների մշակում | Էներգասպառման արդյունավետության բարձրացում | ՀՀ ՏԿԵՆ | ՀՎԷԷԽՀ (համաձայնությամբ) | 2024 թ. մարտ | Միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցություն |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ